ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ՓԱՐԱՔԱՐ ՀԱՄԱՅՆՔ

գ. Փարաքար **29/09/2023**

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 11
ԱՎԱԳԱՆՈՒ ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ

Համայնքի ավագանու նիստին ներկա էին ավագանու 11 անդամներ:

Բացակա էին՝ Օնիկ Ախվերդյանը, Լիանա Գասպարյանը, Վալոդյա Գրիգորյանը, Նելլի Եսայանը, Ռուդիկ Զեյնալյանը, Էմմա Թորոսյանը, Մանուկ Ղազարյանը, Հովհաննես Մխիթարյանը, Հայկազ Սարգսյանը, Ավետիս Ֆարֆարյանը

Համայնքի ղեկավարի հրավերով ավագանու նիստին մասնակցում էին՝

Համայնքի բնակավայրերի վարչական ղեկավարները

Նիստը վարում էր համայնքի ղեկավար՝ Դավիթ Մինասյանը

Նիստը արձանագրում էր աշխատակազմի քարտուղար՝ Գայանե Մանուկյանը

Համայնքի ղեկավարը նշեց, որ արտահերթ նիստի հրավիրումը կապված է Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանված քաղաքացիների խնդիրների քննարկմանը: Նշեց նաև, որ քաղաքացիներին՝ կացարաններով ապահովման, նրանց առաջնային կարիքների գնահատման, սննդով և առաջին անհրաժեշտության այլ պարագաների տրամադրման, ինչպես նաև բժշկական օգնության ու սպասարկման, կրթության և մի շարք առաջնային համարվող հարցեր քննարկվել են համայնքի աշխատակազմում՝ աշխատակիցների մասնակցությամբ: Քննարկման ժամանակ հանձնարարվել է շարունակել խստորեն հետևել բռնի տեղահանվածների հաշվառման գործընթացին, որպեսզի հաշվառումից դուրս մնացած քաղաքացիներ չլինեն :

Լսեցին
1. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՓԱՐԱՔԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 29-Ի ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ /Զեկ. ԴԱՎԻԹ ՄԻՆԱՍՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 65-րդ հոդվածով.Փարաքար համայնքի ավագանին որոշում է.

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնքի ավագանու 2023 թվականի սեպտեմբերի 29-ի արտահերթ նիստի օրակարգը՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Կողմ-11 դեմ- 0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 59-Ա/

Լսեցին

2.ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆԻՑ ԲՌՆԻ ՏԵՂԱՀԱՆՎԱԾՆԵՐԻՆ ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՑՈՒՑԱԲԵՐԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

/ Զեկ.՝ Դ.ՄԻՆԱՍՅԱՆ/

/ Հարակից զեկուցող՝ Է.ԵՐԻՑՅԱՆ/

Ելույթ ունեցավ ավագանու անդամ Էմին Երիցյանը

Նա առաջակեց քննարկել Արցախից բռնի ուժով տեղահանվածների վերաբերյալ ընթացակարգերը, կարևորելով ավագանու արտահերթ նիստի քննարկումը, ընդգծեց որ Հայաստանում կա 72 համայնք և Փարաքարը համայնքը 61 խոշորը համայնքնեից մեկն է, հետևաբար պատասխանատվությունը զգալիորեն մեծ է ներկայիս իրավիճակի կարգավորման գործում, նշեց, որ բռնի տեղահանվածներից մեծ մասը հրաժարվում է պետական օժանդակությունից, տեղաբաշխվելով Հայաստանի Հանրապետության տարբեր մարզեր առաջացնելով քաոսային իրավիճակ, հետևաբար բնակչության ինտեգրումը անհրաժեշտ է կատարել ճիշտ եղանակով, կիրառելով նոր մեխանիզմներ:

Համայնքի ղեկավարի տղակալ Գոռ Սարիբեկյանը առաջարկեց ստեղծել աշխատանքային խումբ, որը բաղկացած կլինի 4 ենթախբերից, որոնք կզբաղվեն կեցության վայրի ընտրության և անկողնային պարագաների ապահովմամբ, սնունդի և դեղորայքի ապահովմամբ, աշխատանքի ինտեգրման գարծընթացի կազմակերպմամբ:

Նշվեց նաև, որ դա համայնքային նախաձեռնություն է և առ այսօր կիրառում են նույն մեխանիզմը, համայնքում կա 1 կացարան որը գտնվում է Այգեկ բնակավայրում՝ գյուղապետարանի շենքն է, որը այժմ ժամանակավոր կացարան է հանդիսանում թվով 20 բռնի տեղահանվածների համար, հավելելով, որ դեռևս երկարաժամկետ գործողությունների ծրագիր իրականացված չէ և գլխավոր խնդիրը լոգիստիկ տեղակայման խնդիրն է, քանի որ բռնի տեղահանված բնակչությունը ցանկանում է բնակություն հաստատել կենտրոնական շրջաններում:

Էմին Երիցյանը հավելեց, որ բռնի տեղահանվածներին չընդրկելու արդյունքում արտագաղթի վտանգն ավելի մեծ է, նա առաջարկեց կատարել տեղեկատվության հավաքագրում ընդգրկելով տնտեսվարողների, թափուր աշխատատեղերի, վարձով բնակարանների, կամավորների ցանկը, յուրաքանչյուր բնակավայրում կատարել քարտեզագրում՝ հասկանալու համար թե որքան կարող ենք ծանրաբեռնել համայնքը, առաջարկեց նաև կառավարության մոտ հանդես գալ նոր ծրագրով, որի շնորհիվ համայնքային սեփականություն հանդիսացող հողատարածքներում կառավարության աջակցությամբ կկառուցվեն բնակարաններ՝ որոշակի պայմաններով բռնի

տեղահանվածներին երեկարաժամկետ հատկացնելու համար:

Համայնքի ղեկավարի տեղակալ Լյուդվիգ Գյուլնազարյանը հավելեց , որ համայնքը գտնվում է մայրաքաղաքին շատ մոտ, հետևաբար վարձով բնակարան գտնելն իսկ խնդիր է, քանի որ հյամայնքը խիստ բնակեցված է:

Եթե համայնքային հողատարածքներում կառուցվեն բնակելի տներ, դա հետագայում կնպաստի համայնքի զարգացմանը և ֆինանսական լրացուցիչ միջոցների աղբյուր կհանդիսանա,

Բնակչության թվի աճին զուգահեռ կունենանք համայնքի սոցիալ տնտեսական աճ:

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 13-րդ հոդվածի 10-րդ մասով, հաշվի առնելով ստեղծված իրավիճակը՝ Արցախի Հանրապետությունից բռնի տեղահանված և Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնք ժամանակավոր ժամանած ընտանիքների բնակարանային ճգնաժամը մեղմելու, առաջնային կարիքները, այդ թվում՝ սոցիալական, առողջության առաջնային պահպանության, մանկահասակ և դպրոցական տարիքի երեխաների ուսման և կրթության խնդիրները գույքագրելու, հաշվառելու և գնահատելու նպատակով՝ ***Փարաքար համայնքի ավագանին որոշում է.***

1. Ի գիտություն ընդունել Փարաքար համայնքի կողմից Արցախից տեղահանվածներին ընդունելու, ինտեգրելու, սոցիալական օժանդակության ապահովման ընթացքի մասին Փարաքար համայնքի ղեկավարի, աշխատակազմի և վարչական ղեկավարների կատարած աշխատանքների վերաբերյալ հաղորդումները:

2. Ի գիտություն ընդունել նիստի ընթացքում Փարաքար համայնքի ավագանու անդամների առաջարկությունները՝ համայնքի ղեկավարին ու աշխատակազմին,առաջարկելով կազմակերպել հատուկ աշխատանքային քննարկում:

Կողմ-11 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 60-Ա/

Լսեցին

3.ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՓԱՐԱՔԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ՕՐՎԱ ՍԱՀՄԱՆՈՒՄ /ՋԵԿ. ԴԱՎԻԹ ՄԻՆԱՍՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 62-րդ հոդվածի 2-րդ մասով. ***Փարաքար համայնքի ավագանին որոշում է.***

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնքի ավագանու 2023 թվականի հաջորդ հերթական նիստի գումարման օր սահմանել 2023 թվականի հոկտեմբերի 18-ը, ժամը 16:00:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Կողմ-11 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 61-Ա/

Լեռնային Ղարաբաղից բռնի տեղահանված քաղաքացիների՝ կացարաններով ապահովման, նրանց առաջնային կարիքների գնահատման, սննդով և առաջին անհրաժեշտության այլ պարագաների տրամադրման, ինչպես նաև բժշկական օգնության ու սպասարկման, կրթության և մի շարք առաջնային համարվող հարցերի ՀՀ Արմավիր մարզի Փարաքար համայնքապետարանի վարչական շենքում տեղի ունեցավ աշխատանքային քննարկում:

Քննարկմանը մասնակցել են համայնքների ղեկավարները, ավագանու անդամները:

Խորհրդակցության ընթացքում համայնքի ղեկավարը հանձնարարեց շարունակել խստորեն հետևել բռնի տեղահանվածների հաշվառման գործընթացին, որպեսզի հաշվառումից դուրս մնացած քաղաքացիներ չլինեն : Համայնքի ղեկավարը քննարկումն հարմարում է արդյունավետ և առաջնային համարվող խնդիրներին առաջիկայում կտրվեն համապատասխան լուծումները

Ավագանու անդամներ

ԴԱՎԻԹ ԱԽՏՈՅԱՆ

ՌՈՒԲԻԿ ԱՂԵԿՅԱՆ

ԼԻԼԻԹ ԱՎԱԳՅԱՆ

ԼՅՈՒԴՎԻԳ ԳՅՈՒԼՆԱԶԱՐՅԱՆ

ԷՄԻՆ ԵՐԻՑՅԱՆ

ՄԱՐԻԱՄ ԻՍՊԻՐՅԱՆ

ԳԵՎՈՐԳ ԽԱՉԱՏՐՅԱՆ

ԴԱՎԻԹ ՄԻՆԱՍՅԱՆ

ԿԱՐԵՆ ՄԿՐՏՉՅԱՆ

ՆԵԿՏԱՐ ՍԱՐԴԱՐՅԱՆ

ԱՐԱՔՍՅԱ ՎԱՐԴԱՆՅԱՆ

Համայնքի ղեկավար

ԴԱՎԻԹ ՄԻՆԱՍՅԱՆ_____

Նիստն արձանագրեց՝ Գայանե Մանուկյանը _____